ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- սեպտեմբերի 2020 թվականի №---Ա
ք. Երևան

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀԱՆՁՆԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2020 թվականի հունիսի 10-ի №Ե/35/903-20 և ի լրումն՝ հունիսի 23-ի №Ե/35/1011-20, հունիսի 25-ի №Ե/35/1049-20 և հուլիսի 22-ի №Ե/35/1260-20 գրություններով դիմել է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով համաձայնություն տալ Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի «Արմավիրի մարզային փորձագիտական կենտրոնի շենքը «Մեծամորի շինարար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը վարձակալությամբ հանձնելու գործարքի (այսուհետ՝ Գործարք) կնքմանը,

բ) Հանձնաժողովը, ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետով և Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 27-ի №39Ն որոշմամբ հաստատված կարգով, 2020 թվականի օգոստոսի 4-ի №ԳԲ/34.1-Մ2-2/3296-2020 գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ՝ Գործարքի վերաբերյալ կառավարության դիրքորոշումն ստանալու նպատակով,

գ) Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարի 2020 թվականի սեպտեմբերի 2-ի №02/12.8/41559-2020 և ի լրումն՝ սեպտեմբերի 3-ի №02/12.8/41559-2020 գրություններով Հանձնաժողով ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածների նախարարության, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության և Հայաստանի

Հանրապետության անվտանգության խորհրդի քարտուղարի դիրքորոշումների համաձայն՝ Գործարքի մասով առարկություններ առկա չեն, միաժամանակ՝ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության գրությամբ ներկայացվել են Ընկերության և «Մեծամորի շինարար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև կնքված՝ արգոն գազի գնման գործարքին առնչվող որոշակի դիտարկումներ,

դ) Հանձնաժողովի կողմից Գործարքին համաձայնություն տալը, «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, չի խախտում էներգետիկ համակարգի հուսալիությունը, անվտանգությունը և ներքին շուկայի սպառողների շահերը, չի սպառնում ազգային անվտանգությանը և պետական շահերին, իսկ անհրաժեշտ փորձ ունեցող անձի վերաբերյալ դրույթը Գործարքի նկատմամբ կիրառելի չէ, և,

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածը և Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 27-ի №39Ն որոշմամբ հաստատված կարգը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի «Արմավիրի մարզային փորձագիտական կենտրոնի շենքը «Մեծամորի շինարար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը վարձակալությամբ հանձնելու գործարքին:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված գործարքի կնքման ժամկետը չի կարող գերազանցել սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից վեց ամիսը:

3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ.

1) սույն որոշման 1-ին կետում նշված գործարքը կնքելուց հետո անհրաժեշտ է երկշաբաթյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել դրան վերաբերող փաստաթղթերի պատճենները.

2) Ընկերությունն իրավասու է սույն որոշումը բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ այն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- սեպտեմբերի 2020թ.